ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019թ. նոյեմբերիի 9-ից 15-ը Ինչոն (Կորեայի Հանրապետություն)՝ շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Իրինա Ղափլանյանի գործուղման վերաբերյալ

1. **<u>ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ</u>**

   Իրինա Ղափլանյան

2. **<u>ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ</u>**

   Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ

3. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ</u>**

   Ինչոն (Կորեայի Հանրապետություն)

   2019թ. նոյեմբերի 9-ից 15-ը

4. **<u>ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ</u>**

   Կորեյաի Հանրապետության՝ Կանաչ կլիմայական հիմնադրամ (GCF):

5. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ</u>**

Մասնակցություն՝ Կանաչ կլիմայի հիմնադրամի (GCF) ղեկավար խորհրդի 24-րդ հանդիպմանը, ղեկավար խորհրդի հանձնաժողովների, պանելների և խմբերի նիստին, ինչպես նաև խորհրդի աշխատանքային և տեխնիկական նստաշրջաններին:

6. **<u>ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ, ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐ</u>**

Կանաչ կլիմայի հիմնադրամի (GCF) ղեկավար խորհրդի 24-րդ հանդիպմանը նախորդող ոչ պաշտոնական հանդիպման շրջանակներում քննարկվեցին մի շարք կարևոր հարցեր մասնավորապես.

- **Ֆինանսական համալրման վերաբերյալ (replenishment)-** դեռևս ակնկալվում է, որ Մեխիկոն, Չիլին և Ռուսաստանը ՄԱԿ-ի կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի (ՄԱԿ ԿՓՇԿ) կողմերի 25-րդ համաժողովի (COP-25) ընթացքում նույնպես հայտարարություն անեն հիմնադրամին ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին: Որոշ երկրներ /հիմնականում ԵՄ երկրները/ կրկնապատկել են իրենց պարտավորությունները և գումարն այժմ կազմում է շուրջ 9.65 միլիարդ ԱՄՆ դոլար: Չիլիի ներկայացուցիչը նշեց, որ իրենց կառավարությունը չի հաստատել :

- **Ծրագրերի հաստատման ծավալը-** Ղեկավար խորհրդի յուրաքանչյուր հանդիպման շրջանակներում հաստատվում են շուրջ 300-400 միլիոն դոլար արժողությամբ նախագծեր: Ակնկալվում է, որ ղեկավար խորհրդի 25-րդ հանդիպմանը ծրագրերի ֆինանսավորումը զգալիորոն կբարձրանա՝ մինչև 1 միլիարդ դոլարի:
- **Ղեկավար խորհրդի ոչ պաշտոնական նիստ -** ղեկավար խորհրդի ոչ պաշտոնական նիստը վերջին անգամ անցկացվել է դեռևս 2016թ.-ին, որը նպաստեց Խորհրդի բավականին հագեցած օրակարգի ձևավորմանը և բազմաթիվ ոչ պաշտոնական հարցերի (օրինակ՝ ռազմավարական ծրագրի) քննարկման անհրաժեշտությանը: Քննարկման ընթացքում առաջարկ եղավ Խորհրդի ոչ պաշտոնական նիստն անցկացնել փետրվարին, ինչի կապակցությամբ զարգացող երկրների ներկայացուցիչները ոչ պաշտոնապես բանակցեն զարգացած երկրների Խորհրդի անդամների հետ: Քննարկվեց նաև Խորհրդի ոչ պաշտոնական նիստի հյուրընկալման հնարավորությունը: Այս պահին միակ առաջարկը հարավային Աֆրիկայից է:
- **2020-2023թթ. ռազմավարական ծրագիրը-** քննարկումների արդյունքում պարզ դարձավ, որ կան բազմաթիվ տարաձայնություններ, ինչպես ռազմավարական ծրագրի, այնպես էլ աշխատանքային պլանի բովանդակության վերաբերյալ, որոնք մշակվել են՝ Խորհրդի 25-րդ նիստին ընթացքում հաստատելու նպատակով:
- **Քաղաքականության վերաբերյալ հարցեր** - Մի շարք քաղաքական հարցեր (policy related issues) նախատեսված էր ներառել Խորհրդի 24-րդ նիստի օրակարգում, սակայն դրանցից ոմանք դեռ վիճահարույց են: Քաղաքական տեսնկայունից առավել վիճահարույց է գենդերային քաղաքականությանը վերաբերող մի շարք հարցեր, սակայն որոշակի ճկունության դեպքում այն հնարավոր է որ այս հանդիպմանը ընդունվի:
- **Ֆինանսավորման վերաբերյալ առաջարկներ**. Ֆինանսավորման վերաբերյալ առաջարկություններում կան երեք պոտենցիալ վիճահարույց նախագծեր, ինչը, ամենայն հավանականությամբ, կհանգեցնի քվեարկության մեխանիզմի կիրառմանը: Դրանք հետևյալն են.
  - **Չինաստանի նախագիծ՝ «Կլիմայի ֆինանսավորման խթանում» (Շենդոնգի կանաչ զարգացման հիմնադրամ)** - այս նախագծի արժեքն է 1,5 միլիարդ դոլար, 180 միլիոն դոլար համաֆինանսավորմամբ Կանաչ կլիմայի հիմնադրամից: Նախագիծը իրականում հաջողված է, սակայն անհրաժեշտ է նաև իմանալ, որ առնվազն ԱՄՆ-ն, այնուամենայնիվ, դեմ է լինելու, ուստի զարգացող երկրների միջև կա միաձայն համաձայնություն՝ նշված նախագծին սատարելու համար:
  - **«Կլիմայական պարտատոմսեր անտառների համար: Մասնավոր Հատվածի Ֆինանսավորման ընդլայնում անտառահատումից և անտառների դեգրադացիայից առաջացած արտանետումների**

կրճատման համար /REDD+/»-Կանաչ կլիմայի հիմնադրամի կողմից ֆինանսավորում՝ 69 մլն ԱՄՆ դոլարի չափով:

- «**Գյուղատնտեսության ոլորտում ջրակուտակում (water banking) և հարմարվողականությունը կլիմայի փոփոխությանը Գազայի հյուսիսային մասում» -Կանաչ կլիմայի հիմնադրամի կողմից** 26 միլիոն դոլարի չափով ֆինանսավորում:

Կանաչ կլիմայի հիմնադրամի (GCF) ղեկավար խորհրդի 24-րդ հանդիպման շրջանակներում քննարկվեցին մի շարք կարևոր օրակարգային կարցեր, մասնավորապես.

- **<u>Օրակարգի 5-րդ հարցը</u>**, որը վերաբերում էր **քարտուղարության գործունեության վերաբերյալ զեկույցին**: Գործադիր տնօրենը ներկայացրեց 2019թ. մայիսից մինչև օգոստոս ընկած ժամանակահատվածում քարտուղարության կողմից իրականացված գործունեության վերաբերյալ զեկույցը: Առավել ուշագրավ էր Ծրագրի կառավարման տեղեկատվական համակարգի վերաբերյալ ներկայացումը: Դա նախագծի ներկայացման և հաստատման գործընթացին հետևելու համար նախատեսված համակարգ է՝ ուղղված արդյունավետության, նպատակահարմարության, ինչպես նաև թափանցիկության ապահովմանը: Համակարգը կգործարկվի 2020թ. 3-րդ եռամսյակում: Կարևոր է նաև նշել, որ միաժամանակ Կանաչ կլիմայի հիմնադրամը բոլոր ծրագրերը կդարձնի հասանելի և մատչելի:

- **<u>Օրակարգի 9-րդ հարցը</u>** վերաբերում էր Կանաչ կլիմայի հիմնադրամի գործունեության զեկույցին: Զարգացած երկրներն ընդհանուր առմամբ ընդունեցին ղեկավարության զեկույցն ու մեկնաբանությունները, մինչդեռ զարգացող երկրները առարկություններ ունեին առաջարկված որոշ հայեցակարգերի առնչությամբ: Քննարկման ընթացքում ես հանդես եկա ելույթով, մասնավորապես նշելով.

  Կարևոր է մեկ անգամ ևս անդրադառնալ զեկույցում ներկայացված առաջնահերթություններին, և մենք ակնկալում ենք տեսնել դրանք ներառված ռազմավարական ծրագրում և ակնկալում ենք, որ մինչև Խորհրդի 25-րդ նիստը այն վերջնականացված կլինի որպես փաստաթուղթ ընդունելու համար: Հարկ է նշել նաև, որ շատ հուսադրող է զեկույցի առնչությամբ գրանցված առաջընթացը, ինչի համար երախտապարտ ենք Քարտուղարությանը՝ պատասխանատու աշխատանքի և հիմնադրամի արդյունավետության բարձրացման ուղղությամբ ներդրված ջանքերի համար: Ինչ վերաբերում է նոր հայեցակարգերին, ապա հարկ է նշել, որ շարունակական աշխատանքներ պետք է տարվեն և վերջիններս

համապատասխանենցվեն հիմնադրամը կառավարող հայեցակարգերին և փաստաթղթերին: Քանի որ որպես կազմակերպություն մենք պետք է առաջընթաց ապահովենք և բացահայտենք նորարարական ուղիներ՝ մարտահրավերի հասցեագրման համար: Մենք պետք է գործենք ավելի արագ և կարծում եմ, որ բնական է նոր հայեցակարգերի փոխլրացումը, մեր առաջընթացին զուգահեռ:

- **<u>Օրակարգի 12-րդ հարցը</u>** վերաբերում էր Քարտուղարության աշխատանքային ծրագրին և 2020թ. վարչական բյուջեին: Քարտուղարությունը ներկայացրեց աշխատանքային ծրագիրը՝ նշելով կարևորագույն հարցերը: 2020թ. Կանաչ Կլիմայի հիմանադրամը նախատեսում է Խորհրդի քննարկմանը ներկայացնել մինչև 1,5 միլիարդ դոլար արժողությամբ նախագծեր: Նույն տարում նախատեսվում է մինչև 1,6 միլիարդ դոլարի հատկացում նախագծերին: Խորհրդի տարեկան բյուջեն մոտ 3 մլն դոլար է, իսկ Քարտուղարությանը՝ 70 մլն դոլար է: Քննարկման ընթացքում ես հանդես եկա ելույթով՝ անդրադառնալով հետևյալ չորս կետերին՝

- *Հարգելի գործընկերներ, նախ շնորհակալություն եմ հայտնում այն լրացուցիչ ջանքերի և ժամանակի համար, որ Քարտուղարության անդամներն տրամադրում են Խորհրդի աշխատանքների կազմակերպմանը և ցանկանում եմ ընդգծել, որ սա կարևոր ազդանշան է հնարավորինս արագ լրացնելու համար ներկայումս առկա թափուր աշխատատեղերը՝ ներուժի հզորացման նպատակով: Դա առավել կարևորվում է մեր պորտֆելի ընդարձակման համատեքստում: Նկատի առնելով վերոնշյալը՝ թույլ տվեք նաև ընդգծել, որ այդ հաստիքները համալրելուց մենք ակնակլում ենք աշխարհագրական լայն ընդգրկվածություն, մեր կազմակերպության բազմաբնույթությունն արտահայտելու նպատակով:*
- *Ես ցանկանում եմ ընդծել նաև, որ ներկայացված քանակական տվյալները չափազանց կարևոր են, սակայն չպետք է մոռանանք կազմակերպչական մշակույթի, և մեր գործընկերների համար աշխատանքային բարենպաստ և հարմարավետ պայմանների ստեղծման անհրաժեշտության մասին: Ցանկալի կլինի տեսնել նաև հստակ քայլեր՝ ուղղված դրական և արդյունավետ աշխատանքային միջավայրի ստեղծման ուղղությամբ քարտուղարությունում:*
- *Մեր տարածաշրջանային խումբը կցանկանար տեսնել ավելի աշխարհագրորեն հավասարակշռված պորտֆել՝ ավելի շատ ուշադրություն ուղղելով այն երկրներին, որոնք մինչ այժմ բավականաչափ ներկայացված չեն:*
- *Կցանկանայինք ունենալ տեղեկատվություն Քարտուղարության կողմից Գրենադայում իրականացվող փորձնական աշխատանքի ընդարձակման*

վերաբերյալ: Մեր տարածաշրջանային խումբը գտնում է, որ այդ աշխատանքն առաջմղման կարիք ունի և ԿԿՀ-ն պետք է նախագծերում ներառված տարածաշրջանային ներակայացուցիչ ունենա: Այդպիսով մենք կկարողանանք ապահովել լրացուցիչ ֆիլտր նախագծային առաջարկների ներկայացման և բովանդակության վերաբերյալ հաղորդակցության համար՝ դյուրինացնելով նախագծային առաջարկների շրջանառության գործընթացը: Այդ կապակցությամբ թույլ տվեք ընդգծել նաև երկրների մասնակցության ընդլայնման և երկխոսության անհրաժեշտությունը՝ երկրներ առաքելության այցեր ունենալու և ֆինանսական հնարավորությունների վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն տրամադրելու միջոցով:

Բյուջեն չի հաստատվել, քանի որ խորհրդի մի շարք անդամներ խնդրեցին պարզաբանումներ, խորհրդատվության համար անհրաժեշտ մեծ ֆինանսավորման վերաբերյալ:

- **<u>Օրակարգի 17-րդ հարցը</u>** վերաբերում էր հավատարմագրման շրջանակին, որն ուներ երկու կարևոր կետեր.
  1.Վերահավաստարմագրման գործընթաց և
  2. Ծրագրի հատուկ գնահատման մոտեցում:

- **<u>Օրակարգի 21-րդ հարցը</u>** վերաբերում էր ԿԿՀ ռեսուրսների կարգավիճակին և պորտֆելի արդյունավետությունը: Առանցքային կետերից մեկը այդ հարցի հատկացումներն էինք (disbursement), որոնք ավելացել էին 9%-ից մինչև 22%, բայց դեռևս բավականաչափ արագ չեն հատկացվում: Ծրագրերի իրականացման 3-րդ տարվա ընթացքում ներկայաումս իրականացման փուլում է հաստատված ծրագրերի 23%-ը: Պատրաստվածության ծրագրերի հիմնական մարտահրավերը տեղային թույլ ներուժն է և ԿԿՀ ստանդարտ ընթացակարգերի վերաբերյալ հստակության բացակայությունը:

- **<u>Օրակարգի 14-րդ հարց - Ֆինանսավորման առաջարկներ</u>**
  Հիմնական տվյալներ՝ 13 նախագիծ պետք է հաստատվի, 100% հանրային ֆինանսավորում; 5% ուղղակի հասանելիությամբ մարմիններ, 95% միջազգային հավատարմագրված կազմակերպություններ, 40% հարմարվողականություն + 60% մեղմում; բոլոր նախագծերի 41% ուղղված է անտառտնտեսությանը և հողօգտագործմանը, երկրորդն ըստ մեծության՝ 13% հատկացված է առավել խոցելի բնակչությանը և համայնքներին: Ընդհանուր արտահայտմամբ՝ ըստ ոլորտների, 38% մասնավոր, 62%

հանրային: Քննարկված ծրագրային առաջարկների հիման վրա կարելի է անել հետևյալ եզրակացությունները՝

- Գյուղատնտեսական, ձկնարդյունաբերական և անտառային նախագծերի դեպքում պետք է դիտարկել միկրովարկերի բաղադրիչները որպես մեր ծրագրերի մաս
- Պետք է ներկայացնել նաև ծրագրային առաջարկներ ուղված քաղաքների կայունությանը և էլեկտրատրանսպորտին:
- Պետք է մշակել և ներկայացնել վաղ ահազանգման համակարգի/ մոնիթորինգի նախագծային առաջարկ: Այն մեծ հավանականություն ունի արագ հաստատվելու:
- Նկատի առնելով գյուղատնտեսության ոլորտի կարևորությունը մեզ համար կարելի է քննարկել Պարենի համաշխարհային կազմակերպության հետ համատեղ նախագծի մշակման հնարավորությունը:
- Կլիմայական ֆինանսավորման գեներացման նախագիծը ևս կարող է մեզ համար շատ կարևոր լինել:
- Անհրաժեշտ է ուսումնասիրել Ռուսաստանի հետ երկկողմ հիմնադրամի ստեղծման հնարավորությունը:

- **<u>Օրակարգի 16-րդ հարցը - Գենդերային քաղաքականություն և գենդերային հարցերի վերաբերյալ գործողությունների պլան</u>**

  Մեր տարածաշրջանային խումբը ներկայացնող ավանդական պահպանողական երկրները առաջ էին քաշում նոր հարցեր և առաջարկներ: Փաստաթղթի մեջ արդեն ներառվել են զգալի փոփոխություններ՝ ավելի պահպանողական դիրքորոշումը ներառելու նպատակով: Ակնհայտ էր, որ զարգացած երկրների տարածաշրջանային խմբերը նոր ուղղումներ չեն առաջարկելու քաղականության մեջ: Ես քաղաքականության աջակցությանն ուղղված կարճ ելույթ ունեցա (Իրանը, Սաուդյան Արաբիան և Տանզանիան շարունակում էին պնդել հետագա լրացումների վրա):

  “Նախ ցանկանում եմ շնորհակալություն հայտնել փաստաթղթի վրա կատարված աշխատանքների և այն վերջնականացնելու համար՝ ներառելով բոլոր կարծիքները: Սա իսկապես կարևոր խնդիր էր և ես շնորհակալ եմ, որ այդ խնդրին արդյունավետ և բազմակողմանի լուծում տրվեց : Երկրորդելով իմ գործընկերոջը, ցանանում եմ ընդգծել քաղաքականության կարևորությունը՝ հաշվի առնելով գենդերային հարցերը կլիմայական կայուն և համապարփակ զարգացման համար: Իմ տարածաշրջանային խմբի

անունից հայտնում եմ, որ մենք աջակցում ենք առաջարկվող գենդերային քաղաքականությանը և գործողությունների ծրագրին:”

Գենդերային քաղաքականությունը վերջնականապես հաստատվեց մի շարք մեջբերումներից և տեքստում փոփոխություններից հետո:

- **<u>Օրակարգի 11-րդ հարցը – 2020-2023թթ. ռազմավարական պլանավորում</u>**
  Հանդիպման շրջանակներում քննարկվեցին ռազմավարական ծրագրին վերաբերող մի շարք հարցեր, սկսած ռազմավարական և գործառնական խնդիրներից, որոնք ներառված են մեկ փաստաթղթում, մինչև այն հատուկ ոլորտները, որոնք ունեն որոշակի ճշգրտման կարիք: Այս կապակցությամբ պայմանավորվածություն ձեռք բերվեց իրականացնել ոչ պաշտոնական հանդիպում, որը տեղի կունենա Լիբերիայում, փետրվարի 5-ից 7-ը: Որոշման մեջ նշված է նաև, որ Հայաստանը նույնպես առաջարկել է հյուրընկալել պաշտոնական հանդիպումը: Հանդիպման արդյունքում նախատեսվում է նաև, Կանաչ կլիմայի հիմնադրամի ռազմավարական ծրագրի կվերջնականացում առաջիկա 4 տարիների համար:

  <u>Օրակարգի 17-հարց-հավատարմագրման շրջանակին վերաբերող հարցեր</u>
  Վերոնշյալ օրակարգային հարցը ամենավիճելին էր, որը քննարկման համար պահանջեց շուրջ 3 ժամ, և քննարկումները չհանգեցրեցին դրական եզրակացության ընդունմանը: Օրակարգային այս հարցը նախատեսում էր երեք ենթահարց.
  1) կազմակերպությունների վերահավատարմագրման նոր կարգի հաստատում,
  2) հավատարմագրված կազմակերպությունների վերանայում/գնահատում
  3) ծրագրերի հատուկ գնահատման մոտեցում:
  Ի տարբերություն վերջին երկու կետերի առաջինը խնդրահարությց չէր:
  Զարգացող երկրները չհամաձայնեցին ծրագրերի հատուկ գնահատման մոտեցումն հետ, իսկ զարգացած երկրները շարունակում էին պնդել երկրորդ կետի առնչությամբ: Զարգացող երկրները չէին ցանկանում նախապայմաններ առաջադրել ծրագրերի հատուկ գնահատման մոտեցման վերաբերյալ, զարգացած երկրները (մասնավորապես Շվեդիան) ցանկանում էին, որ այն դառնա պիլոտային:

7. ԵՐԿԿՈՂՄ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Կանաչ կլիմայական հիմնադրամի (GCF) ղեկավար խորհրդի 24-րդ հանդիպման շրջանակներում երկկողմ հանդիպում ունեցա զարգացող երկրի տարածաշրջանային խմբի համանախագահի խորհրդական Ռիչարդ Շերմանի հետ, որի ընթացքում քննարկեցինք ոչ ֆորմալ խորհրդի նիստեր անցկացնելու կարևորությունը: Քննարկման ժամանակ նա նշեց, որ նախատեսվում է ոչ պաշտոնական հանդիպում կազմակերպել 2020թ. փետրվարին, ավելի մանրմասն քննարկելու համար 2020-2023թթ. Ռազմավարական ծրագիրը, որպեսզի Կանաչ կլիմայական հիմնադրամի (GCF) 25-րդ ղեկավար նիստի ժամանակ այդ ռազմավարությունը ընդունվի: Մենք քննարկցինք այդ հանդիիպումը Հայաստանում անց կացնելու հնարավորությունը, սակայն քանի որ Լիբերիան առաջինն էր այդ առաջարկը ներկայացրել, ամենայն հավանականությամբ այն տեղի կունենա Մոնրովիայում: Խորհրդի 27-րդ հանդիպման վայրը նախատեսված է անց կացնել ԿԿՀ-ի գլխամասային գրասենյակից դուրս, և եթե Հայաստանը արագ ուղարկի պաշտոնական առաջարկությունը, և հրավիրի ԿԿՀ-ին ապա հավանականությունը, որ Հայաստանի հրավերը կընդունվի շատ մեծ է:

Քննարկեցինք նաև նոր համանախագահներ ընտրելու վերաբերյալ հարցը և վերջինիս ընթացակարգերի և թեկնածուների ընտրության հետ առնչվող խնդիրները: Զարգացող երկների խմբում միայն երեք տարածաշջանային խմբեր կարող են ունենալ համանախագահներ՝ Աֆրիկան, Ասիայի խաղաղօվկիանոսյան տարածաշրջանը և Լատինական Ամերիկան: 2020թ.-ից Ասիայի տարածաշրջանի համանախագահման հերթական շրջանն է, և համանախագոհն ընտրվեց Պակիստանի ներկայացուցիչը:

Քննարկեցինք նաև ԿԿՀ-ի 2020-2030թթ. Ռազմավարական նախագիծը, և Քարտուղարության ակնկալիքները խորհդրի անդամներից կարծիքներ և առաջարկություններ ստանալու վերաբերյալ: Զարգացող երկների ներկայացուցիչները ընդհանուր հայտարարի եկան հետևյալ կետերը շեշտելու կարևորության շուրջ, և նախատեսում ենք Հայաստանի կողմից նույնպես այդ կետերով մի քանի առաջարկություններ ուղարկել ԿԿՀ-ին.

- ձգտել ավելի հավակնոտ ազդեցության,
- հստակեցնել ռազմավարությունը՝ սահմանելով, թե որտեղ Կանաչ կլիմայի հիմնադրամը կարող ապահովել առավելագույն արժեք,
- հստակեցնել ծրագրի ուղղությունները, կենտրոնանալով որակի, ազդեցության և արդյունքների վրա,

- կանխատեսելի և նպատակային աջակցություն՝ պլանավորման և ծրագրի կարողությունների համար,
- Կանաչ կլիմայի հիմնադրամի ուղեցույցի հստակեցում,
- մասնավոր հատվածի դերակատարության բարձրացում, դրամաշնորհի մասնաբաժնի պահպանում, ռիսկերի ֆինանսավորման բարձրացում:

Ղեկավար խորհրդի 24-րդ հանդիպման շրջանակներում հնարավորություն ընձեռվեց հանդիպել Կանաչ կլիմայի հիմնադրամի տնօրենի տեղակալ Քլիֆորդ Պոլիկարպի հետ: Պրն Պոլիկարպի հետ քննարկեցինք մի շարք կարևոր հարցեր, մասնավորապես.

- Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության հետ համատեղ ՀՀ-ի կողմից ներկայացված ծրագիր - քննարկեցինք այդ ծրագրի ԿԿՀ-ի 25-րդ նստաշրջանի օրակարգում ընդգրկելու հարցը, հաշվի առնելով, որ այդ ծրագիրը բոլոր նախատեսված ընթացակարգերով արդեն անցել է: Ըստ Պրն Պոլիկարպին, վերջին հաղորդագրությունը ուղարկվել է ՊԳԿ-ին, և ամենայն հավանականությամբ ծրագիրը կընդգրկվի 25-րդ նստաշրջանի օրակարգում, սակայն վերջնական հաստատումը մենք կստանանք ավելի ուշ:

- Երկրի ծրագրի մասին (GCF Country Programming) . Այս հարցի առնչությամբ պարոն Պոլիկարպը տեղեկացրեց, որ առաջարկություններն ընդունելուց և Ռազմավարական ծրագրի առաջին նախագիծը ավարտելուց հետո Քարտուղարությունը պլանավորում է տեղեկացնել Ազգային համակարգողներին (NDA), այն մասին, որ ԿԿՀ-ն ակնկալում է, որ երկները իրենց Երկրի ծրագրերում ներկայացնեն ոչ ավել քան 3 կամ 4 ֆլագշիփ նախագծեր: Այս փոփխության նպատակն է բարելավել ծրագրերի որակը (այսինքն, ակնկալում են ունենալ փոքր քանակությամբ բայց բարձր որակի նախագծեր) և իրականացնել ընդլայնված/մեծ ծրագրեր:

Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ

Recoverable Signature

X

ԻՐԻՆԱ ՂԱՓԼԱՆՅԱՆ

Signed by: GHAPLANYAN IRINA 7709830366

Իրինա Ղափլանյան